

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍՏՎԱԾԱՅՆՁԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Եղարի առաջին տասնամյակում, 405—
406 թվականին, Ս. Մեսրոպ Մաշտոցի մի-
ջոցով կատարված հայ գրերի գուտը և դրա-
սից անմիջապես հետո սկսած Աստվածա-
շնչի հայերեն (գրաբար) առաջին թարգմա-
նությունը 406—420 և երկրորդ թարգմանու-
թյունը կամ սրբագրությունը 432—438 թվա-
կաններին, որով հիմքը դրվեց հայ գրավոռ
գրականության, ծնունդ են ժամանակի քա-
ղաքական, տնտեսական պայմաններին,
պատմականորեն հասունացած անհրաժեշ-
տության և ազգային-եկեղեցական ու մշա-
կությին տեսակետից անկախ ու ինքնու-
րույն լինելու բաղձանքին:

Եղարը մեր ժողովրդի և գրականության
պատմության մեջ վերին աստիճանի մի նշա-
նակալից երևույթ է հանդիսանում: 387 թվա-
կանից, Տիգրոնի թաշնաբրությամբ Բյուզան-
դիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի
առաջին բաժանումից հետո, մեր երկիրն ու
ժողովրդը ընկել էին երկու քարի, երկու
կրակի միջև Հալ գիրն ու գրականությունը
ստեղծվում են պատմական այնպիսի իրա-
դրության մեջ, երբ օրակարգի էր դրված
հայ պետականության ինքնուրույնությունն
ու գոյությունը, և երբ հայ մշակույթն ու
կրոնը եղջերու վտանգի առաջ էին կանգ-
նած՝ հունա-ասորական մշակույթների և
կրոնի ներթափանցող ազգեցությամբ: Մեր
երկրի միասնությունն ու ժողովրդի միասնա-
կանությունը բաժանված էին երկու թշնամի
ու գիշատիչ պետությունների՝ Բյուզանդիոնի
ու Տիգրոնի միջև: Երկրի պառակտվածու-
թյունը լուրջ վտանգ էր ներկայացնում հայ
ժողովրդի ֆիզիկական գոյության համար:

Այդ ճննաժամային օրերին ժամանակի առա-
ջավոր ու հայրենասեր մարդկանց հայար-
օրվա առաջնահարթ խնդիրն էր ստեղծել մի
այնպիսի ամուր պատվանդան, մի այնպիսի
գաղափարական գենք, որը հնարավորու-
թյուն տար Հայաստանի երկու մասերի մի-
ջև ստեղծելու ազգային-մշակութային, գա-
ղափարական, միասնական հոգևոր կապ:
Միակ արմատական միջոցը այդ անել կա-
ցությունից դուրս գալու սեփական գիր ու
գրականություն և ազգային գրավոր մշա-
կույթ ունենալու հարցն էր: Միա յն ու միայն
ինքնուրույն, ազգային գրականության և
մշակույթի ստեղծումով կարելի էր մի զորա-
վոր գաղափարական պատճեց կանգնեցնել
ընդունելու հրանի և Հոռոմի: Այս թե ինչու Ե
դարի սկզբներին հայ ժողովրդի համար
ստեղծված քաղաքական այդ ծանր իրադար-
ձությունը անհրաժեշտություն դարձրեց գի-
մելու վճռական միջոցների:

Եղարը հայ ժողովրդի ինքնագիտակցու-
թյան և հերոսական գոյամարտերի դարա-
շրջանն էր. պայքար հայ մշակույթի և գրա-
կանության միջոցով հովաների դեմ, պայքար
սրով՝ պարսիկների դեմ, պահպանելու հա-
մար ժողովրդի ինքնուրույնությունը և կան-
խելու ձուլման վտանգը:

428 թվականին Հայաստանի քաղաքական
անկախության կողմանից հետո, երբ վերջա-
ցավ Արշակունյաց դինաստիան, հայ ժողո-
վրդի ազատագրական, քաղաքական այդ
պայքարը ղեկավարում էին ժամանակի ա-
ռաջավոր մարդկար, հայ գրերի ստեղծումով
և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ:


Հայ գիրն ու դպրությունը, հայոց լեզուն, հայ ժողովրդի աղքային գոյության պահպանման և ամրապնդման գործում, հանդիսացան հզոր աղջակ և պատմական մեծ նշանակություն ունեցան թե՛ Ե դարում թե՛ հետագա դարերում:

Գրերի գյուտը և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը միաժամանակ հնարավորություն կտային վերականգնելու երկրի անկախությունը, միավորելու Արշակունիների թագավորությունը Ե դարում հոգևորականությունը և արքունիքը գրերի գյուտի մեջ տեսնում էին ոչ միայն հայ մշակույթի զարգացումը, այլ նաև բաժանված և թու-

իր տեղը կուգա գրավել լուսավորյալ մարդկության մեջ՝ (Ն. Աղոնց, «Անահիտ», 1937 թ., № 3, էջ 16):

Գրերի ստեղծումով սկսվում է հայ ժողովրդի մշակույթի զարգացման մի նոր շրջան:

Գրերի գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ հայ ժողովուրդը աղատվեց ասորա-պարսկական մշակույթի մեջ ձուլվելու վտանգից: Քրիստոնեությունը հայացավ և ամրապնդվեց մեր երկրում, հայության սրտի մեջ արմատավորվեց ճշշմարիտ աղքային գիտակցությունը, հայոց զարգացումը,



ԱՍՏՎԱԾԱՇՆՅԻ ՀԱՅԵՐԵՆ ՀՆԱԿՈՒՅՑՆ ՋԵՌԱԳԻՐ ՊԱՏԱՌԻԿԻ (Զ. ԴԱՐ) (Երևանի Գետական ձեռագրատուն)

լացած հայ քաղաքական իշխանության միավորումը և ամրապնդումը:

Աստվածաշնչի ոչ մեկ թարգմանությունը ոչ մի ժողովրդի կյանքում երբեք չի ունեցել այն բախտորոշ և վճռական նշանակությունը, ինչ ունեցել է Աստվածաշնչի հայերերեն (Գրաբար) թարգմանությունը հայ ժողովրդի համար «Լատին» գրականությունը շատուց ի վեր գոյություն ուներ, երբ Վոլգատան (Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը— Ա. Հ.) երեցավ, մինչեւ հայ Աստվածաշունը սկզբնավորություն եղավ նոր թվականի մը, ուր հայ ժողովուրդը, առաջին անգամ ըլլալով՝ գրիւ ի ձեռին

պատմության ոգին զարթնեց և հայ հոգիներից ներս թափանցեց գրականության, մշակույթի, լուսավորության կենդանի և մարզուր շունչը:

Աստվածաշնչի թարգմանության հալոցի մեջ զտվեց, պայծառացավ, առնականացավ հայոց լեզուն և ստեղծվեց մեր մատենագրության մեջ ինքնատիպ աղքային Սահակ-Մեսրոպյան ոճը, որին նմանվել ձգտեցին հաջորդ դարերի մեր գրականության մշակները:

Ե դարում Աստվածաշունը, «ի ձեռն երկուց հաւասարելոցն [Մահակայ և Մեսրոպյայ] հայաբարբառք հայերէնախօսք գտան»

(Կորյուն) և հիմք դրվեց հայ գրականության:

Դրերի գյուտի և Աստվածաշնչի հայերեն թարգմանության, Կորյունի բացատրությամբ՝ «աստուածագործ մշակութեան արուեստ»-ի մասին խոսում են Եղարի մեր երեք մատենագիրները՝ Կորյունը և Պատմութիւն վարուց և մահուան Սրբոյն Մեսրոպաց վարդապետին մերոյ թարգմանչին» (Թիֆլիս, 1913 թ.), Մովսես Խորենացին՝ «Պատմութիւն Հայոց» (Թիֆլիս, 1913 թ.) և Ղազար Փարպեցին՝ «Պատմութիւն Հայոց» (Թիֆլիս, 1908 թ.) աշխատությունների մեջ:

Այս երեք մատենագիր-պատմիչները շատ քիչ բան են հայորդել մեզ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մասին, այն էլ հաճախ տարտամ, անորոշ և մերթ հակասական: Մինչ Կորյունը և Խորենացին խոսում են Աստվածաշնչի հայերեն երկու թարգմանությունների մասին՝ մին գորերի գյուտից անմիջապես հետո և մյուսը 432 թվականից հետո, Ղազար Փարպեցին՝ հիշատակում է միայն մի թարգմանություն:

Աստվածաշունչը միանվագ և ամբողջությամբ չի թարգմանվել: Առաջին մասնակի հայերեն թարգմանությունը սկսած պետք է լինի գրերի ստեղծուամից անմիջապես հետո, ծղեսիայում, Մեսրոպ Մաշտոցի նախաձեռնությամբ և Հովհան Եկեղեցացու ու Հովհանի Պաշնացու աշխատակցությամբ: Այս մասին Կորյունը վկայում է, որ Ս. Մեսրոպը, գրերի ստեղծուամից հետո, երբ «հայկական շափուն ծնեալ ծնունդու նորոգ և սքանչելի» Սուրբ Աջովն իւրով նշանագիրս հայերէն լեզուին (էջ 14—15), ծղեսիայում հրաժեշտ է, տալիս տեղի Ռաբուլաս (Թարելաս) եպիսկոպոսին և «իշխանէր ի քաղաքն Սամոստացւոց», որը հեղենիստական մշակույթի կարևոր կենտրոններից մեկն էր Միջագետքի հյուսալին մասում, և դիմում հունական դպրության հմուտ գրիլ Հոռովիանոսի օգնության:

405—406 թվականներին Մեսրոպ Մաշտոցը ծղեսիայում ստեղծելուց հետո հայ նշանագրերը, նրանց յուրաքանչյուրին տալիս է առանձին ձև, որոշում անունները և որոշ դասավորությամբ շարում, կազմելով մեր այսօրվա այբուբենը. «և անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինք սիլորայիւկ և կապօք» (Կորյուն, էջ 14): Ապանա «հանդերձ օգնականօք իւրովք» գնում է Սամոստա՝ հայ գրերի տեխնիկական վերջին ձեւավորումը տալու համար հույն գպրության գրագրական արվեստի վարպետ Հոռովիանոսի մոտ: Վերջինս վերցնում է Մեսրոպի պարզ սեագրությունը և

նկարում մագաղաթյա թղթի և մոմի տախտակի վրա մի վայելով՝ պնակիտ, տառերի կարձ՝ կարճ, երկարը՝ երկար պահելով՝ և նուրբ ու հաստ գծերը գեղեցիկ նկարելով» (Կորյուն, էջ 15):

Հայ տառերի ձեւավորումից հետո, Մեսրոպ սկսում է թարգմանության, որպես նախափորձ՝ Սողոմոնի Առակաց գրքի առաջին գլուխց. «և թարգմանութիւն դառնային հանգերձ արամբը երկուք, որոց առաջնոյն Յովհանալ անունն կոչէին և երկրորդին Յովհանի: Եւ եղեալ սկիզբն թարգմանութեան զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի» (Կորյուն, էջ 15), Ս. Մեսրոպի ձեռքով հայերենի թարգմանված առաջին նախադասությունն է հետևյալը. «Ճանալել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զրանս հանճարոյ» (Առակը Ա 1): Հոռովիանոս ոչ միայն իր գեղեցիկ գրչով գրում է Մեսրոպյան առաջին թարգմանությունը. այլ նաև հայերեն գեղագրության արվեստն է սովորեցնում Մեսրոպի աշակերտներին. «որ և գրեցաւ ձեռամբ այնորիկ գրչի, հանգերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան» (Կորյուն, էջ 15): Խորենացին, կրկնելով Կորյունի ասածները, ավելացնում է, որ Մեսրոպ «զարգանալի արագութեամբ» թարգմանում է նաև Հին Կտակարանի 22 հայտնի կամ նախականոն գրքերը և ամրոջ նոր Կտակարանը, ինչ որ հավանական չի թվում. «ևսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ զբան և երկու յայտնիսս և զնոր Կտակա յեղուլ ի հայ բան» (Խորենացի, էջ 336): Պարզ է, որ Սամոստատում Մեսրոպ չէր կարող երկու աշակերտով թարգմանել ամրոջ Աստվածաշունչը, երբ աշակերտները գրերի գյուտի օրերին գեն այնքան էլ հմուտ չէին ոչ ասորերեն և ոչ հունարեն լեզուիների իմացության մեջ: Փարպեցին վկայում է. «Եւ երանելի Մաշտոց և որբ ընդ նմա... պատուական քահանայքն էին՝ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ, թարգմանել գիրս ի լոյն լեզույն ի հայ բարբառս, վասն զի ոչինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յոնարէն ուսման» (Փարպեցի, էջ 33):

Սամոստատում Մաշտոց ժամանակ շուներ թարգմանությամբ զբաղվելու նրա բուն նպատակը չէր Աստվածաշնչի թարգմանությունը, այլ՝ հայ գրերի գյուտը և ձեւավորումը:

Գրերի գյուտից և Աստվածաշնչի հայերեն թարգմանության նախափորձից (Առակը Ա 1) հետո, Ս. Մեսրոպը Սամոստատոց «հոգելից ուրախութեամբ եղեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան

դաւառին, առ սահմանօք նոր քաղաքին» («Կորյուն, էջ 16»), այն է Վաղարշապատ, թագվորական և Հայրապետական աթոռանիստը: Հայ տառերի մեծ գյուտարարը ընդունվում է ժողովրդի «ցնձութեան բարբառօք և երգօք հոգեորօք» (Կորյուն, էջ 17): Փարպեցին նկարագրում է ուրախությունը բոլոր ժողովրդի, հոգեորականության և արքունիթի: ամեն ոք «փափաքէր յուսումն գիտութեան, որպէս ի խաւարէն, յասորի տանչանացն, զերծեալք ի լոյն՝ խնդալին» (էջ 32) գրերի գյուտով: Կորյունը, դեպքին ականատես և խանդավառ, Մեսրոպի գալուտը Հայաստան նմանեցնում է Մովսես մարգարեի Սինա սարից էջքին, տասնարանյա աստվածաշնորհ պատվիրանները ձեռքին: «Օրհնութեամբ ի քաղաքն [թագաւորական] դառնային, և զաւորս տօնական ուրախութեամբ անցուցանէին» (էջ 17): Գրերի գյուտը համազգային տոն էր հայ ժողովրդի համար:

Կորյունը, արտահայտելով բովանդակ ժողովի «սրտալիր ուրախութիւն»-ը (էջ 19) գրեթե գյուտի բարեբաստիկ առթիվ, գրում է. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սքանչելի լինէր» (էջ 18), որովհետև գրեթե գյուտով և Աստվածաշնչի թարգմանությամբ մեր երկրում «աստուածագործ սքանչելագործութիւնք գործեցան...», մեր ժողովուրդը «առ ժամայն վաղվաղակի ամենայն իրաց եղելոց խելամուտ լինէր»: Իսկ Ասողիկ պատմիշը (Ժ դար) ավելացնում է. «Ակիզրն դպրութեանս Հայոց եղև սկիզբն մեծ գիտութեան և անպայման խնդութեան» («Պատմութիւն տիեզերական», Ա. Պետեռուրդ, 1885 թ., էջ 74):

Մեսրոպ Մաշտոցը Հայրենիք վիրադառնալուց հետո, սկսում է մշակութային-դրական բուն գործունեության՝ «թարգմանել, գրել և լուսուցանել», բացվում են դպրոցներ, ժողովրդի մեջ արմատավորվում է գրաճանաչությունը, շարունակվում է թարգմանական գործը մինչև 420-ական թվականները, երբ Ս. Սահակը կանչվում է Տիգրոն, իսկ Մեսրոպը գրական, քարոզչական առաքելության մեկնում Վրաց և Աղվանից աշխարհները և ապա Բյուզանդիոն։ Ս. Մեսրոպի շրջագայությունը տևում է 7—8 տարի, հավանական է 415—423 թվականներին։

Ուրեմն 406—420 տարիները Աստվածաշնչին առաջին հայերեն թարգմանության տարիներն են:

Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը կամ սրբագրությունը կատարվում է 432—438 թվականներին:

Աստվածաշնչի թե՛ առաջին և թե՛ երկրորդ
թարգմանության աշխատանքներում մեծ

վաստակ ունի U. Սահակը՝ որպես գործի հովանավորողի, կազմակերպողի և հմուտ թարգմանողի:

Ամբողջ հոգևորականությունը, թագավորն
ու իշխանները, ի գոլով ունենալով Մեսրոպ
Մաշտոցին, «աշխարհապաղատ թախան-
ձանք»-ով դիմում են Սահակ Պարթևին, որ
գլխավորի թարգմանական աշխատանքը,
որի անվիճելի հմտությունն ու ծեռնշատու-
թյունը ուներ նա, իր արվեստագետի նուրբ
ճաշակով, «արուեստաւոր ուսմանց տեղե-
կութեամբ» և «զօրաւոր ճարտարութեամբ,
զոր ուներ ի բնէ»:

Աստվածաշնչի թարգմանության մեջ Ս. Սահակին է ընծալված Հնդամատյանի, Սաղմոսների, չորս մեծ մարգարեների, Երգ երգոցի թարգմանությունը, իսկ Մեսրոպին՝ Առաքաց, ժողովողի և Սիրաբի. Բայց Աստվածաշնչի հիմնական թարգմանիչը Ս. Սահակն է:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության
հարցը շատ է զբաղեցրել թե՛ հայ և թե՛ օ-
տար գիտնականներին։ Հենվելով Կորյունի,
Խորենացու և Փարպեցու մատենագրական
հաղորդումների վրա, բանասերները կատա-
րել են մի շարք մատենագրական, բննադա-
տական հետազոտություններ և հասել են
հաճախ տարրեր, միմյանց հակասող եղան-
կացությունների։

Աստվածաշնչի թարգմանությունը, որպես
զուա մատենագրական ձեռնարկ, դեռևս
սպառիչ կերպով չի ուսումնասիրվել, որով-
հետեւ այդ գործի հետ միշտ կապված էին
մնում մի շարք դժվարություններ։ Աստվա-
ծաշնչի հայերեն թարգմանությունը կարոտ-
է Է՛լ ավելի խոր և բազմակողմանի ուսում-
նասիրությանց։

Գրերի գլուխի և Աստվածաշնչի թարգմանության մասին խոսող ծ դարի մեր վերոհիշյալ երեք պատմիչները եղել են շատ ժլատ. նրանք խոսել են ավելի հայ ժողովրդի կյանքում Աստվածաշնչի հայերեն թարգմանության՝ թողած հոգեոր, իմացական և բարոյական մեծ նշանակության մասին և չեն ծանրացել թարգմանության գործի մանրամասն պատմության վրա. Այդ պատճառով մինչև այսօր դժվար է ճշտել Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ թարգմանիչներից յուրաքանչյուրի ըաժինը, թե ո՞վ ի՞նչ է թարգմանել: Մեզ հասել է Թարգմանիչների միայն մի քանիսի անու-

նը, հնչպիսիք են Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոցը, Եղիշեկը, Կորյունը, Հովհաննեկեղացին Հովհաննեկ Վայոցձորեցին, Հովհաննեկ Պաղմացին, Ղևոնդ Երեցը, Մուշե Տարոնեցին, Տեր Խորենացին, Գևորգ Վանանդեցին, Արծանը, Աբրահամը և ուրիշներ:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ ամենակարևոր հարցը թարգմանության բնագրի (տեքստի) ընտրության հարցն է եղել միշտ: Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակ գործածված բնագրի մասին շատ քիչ և մշշուշտ ակնարկություններ ունեն Կորյունը, Փարակեցին և Խորենացին:

Աստվածաշունը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ Հին Կտակարան կամ Հին Ուխտ, բաղկացած 39 գրերից, և նոր Կտակարան կամ նոր Ուխտ՝ բաղկացած 27 գըրքերից:

Հին Կտակարանը գրվել է մեր թվարկությունից առաջ մինչև Դարրա, երրայերեն լեզվով, երրայերենը սրբազն լեզու էր հրեաների համար, որով և գրվել են երրայական դասական բոլոր գրքերը:

Սակայն երբ հրեաները մեր թվարկությունից առաջ Գ դարում ցրվեցին ամբողջ Հին աշխարհով մեկ և Պաղեստինից դուրս ստեղծվեց հրեական Սփյուտքը (դիաստորա), որտեղ տիրում էր Հելլեն լեզուն և մշակութը, անհրաժեշտություն զգացվեց Հին Կտակարանը թարգմանել Հոնարեն լեզվի Սփյուտքի հրեաների հոգուր կարիքների համար եվ աճա այդ անհրաժեշտությունից դրված, Հին Կտակարանը երրայական բնագրից առաջին անգամ թարգմանվեց Հոնարենի Ալեքսանդրիայում, Եգիպտոսի Պտղոմեոս Ֆիլադելֆու (Եղայրասեր) Հելլենասեր թագավորի օրոք (285—247 թ. թ. մ. թ. ա.): Հին Կտակարանի այս առաջին Հոնարեն թարգմանությունը, կատարված Ալեքսանդրիայի մեծահարուստ մատենադարանի տեսուչ Դիմիտրիոս Փալերիոսի հանձնարարաթյամբ, կոչվում է Յնթանասնից թարգմանություն (Սեպտուագինտա), թարգմանված Ալեքսանդրիայում 70 երրայագետ-հունագետ հրեա գիտնականների կողմից:

Քրիստոսի ժամանակ Հին Կտակարանի այս Յնթանասնից հոնարեն թարգմանությունը ընդհանրացած էր նաև Պաղեստինում: Քրիստոս և առաքյալները իրենց քարոզության ընթացքում օգտագործում էին Հին Կտակարանի Յնթանասնից թարգմանությունը:

Հին Կտակարանի երկրորդ թարգմանությունը երրայերենից՝ կատարվել է ասորերեն լեզվով մեր թվարկության Բ դարում:

Ասորերեն է թարգմանվել միաժամանակ նոր Կտակարանը, որի բնագիրը, ինչպես հայտնի է, հոնարեն էր: Հին Կտակարանի ասորերեն լավագույն թարգմանությունը կոչվում է Փեշիտտո, որը չորս ասորական թարգմանությունների մեջ լավագույնն է, հարազատ երրայական բնագրին և պաշտոնացին ընդունված և գործածված Ասորերեն կողմից:

Աստվածաշնչը թարգմանվել է աշխարհի բոլոր լեզուներով, սակայն այդ թարգմանությունների մեջ առանձին արժեք են ներկայացնում մինչև Եղիշե դարը կատարված հին թարգմանությունները, որոնց թվում և հայերեն թարգմանությունը:

Հստ թարգմանության վաղեմիության կարգի՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը գրավում է յոթերորդ տեղը Ս. Գրի համաշխարհային թարգմանությանց մեջ, Այսպես առաջինը՝ Յոթանասնից, երկրորդը լատիներենը՝ Կովկասան, երրորդը ասորերենը, չորրորդը Եփովականը, հինգերորդը Եփովականը, վեցերորդը գոթականը, յոթերորդը հայկականը, բոլորն էլ համարյա Եղիշե:

Արդ, Եղիշը այս վերոհիշյալ թարգմանություններից ո՞ր մեկի բնագիրը իրենց առաջ ունեցել են մեր թարգմանիչները: Այլ խոսքով՝ Աստվածաշնչի գրաբար թարգմանությունը ո՞ր բնագրից է կատարվել, երբայականից, Յոթանասնից թարգմանությունից, թե՝ Փեշիտտոյից:

Հայ բանասիրության մեջ տարածված կարծիքը ընդհանրապես եղել է ի նպաստ ասորական բնագրի: Այս տեսության կողմանիցները ընդունում են, որ Հին Կտակարանի առաջին, կամ այսպես կոչված «փութանակի», «յանկարծագիւտ» թարգմանությունը կատարվել է Փեշիտտոյի, այսինքն ասորական բնագրի վրայից, որը 432 թվականից հետո սրբագրվել է: Կոստանդնուպոլիսից բերված «ստոյգ» կամ «հաստատուն» կոչված Յոթանասնից հոնարեն օրինակի վրայից: Ուրիշներ կանգնել են, բնագրի ընտրության հարցում, այլ տեսակետի վրա: Վերջիններս ընդունում են, որ Հին Կտակարանի առաջին թարգմանությունը նույնպես կատարվել է հոնարեն պատահական մի բնագրի վրայից:

Նախ երկու խոսք այն մասին, թե ի՞նչ է իրենից ներկայացնում թարգմանիչների Կոստանդնուպոլիսից բերած «ստոյգ» կամ «հաստատուն» կոչված հոնարեն օրինակը:

Ալեքսանդրյան Եկեղեցու նշանավոր վարդապետ Օրիգենեսը (185—254 թ. թ.), գաղարեցներու համար հրեաների և քրիստոնյաների միջև առաջ եկած վեճերը Աստվա-

ծաշնչի երբայական բնագրի և հին թարգմանության մասին, իր Ս. Գրքի Թառիշյան և Վեցիշյան Հոյակապ աշխատության մեջ «կաղապարել» տվել էր երրայական բնագիրը, իսկ նրա դիմաց՝ Յոթանասնից և մյուս հույսուն թարգմանությունները, նշելով միաժամանակ և ուղղելով նրանց տարրերությունները աստղաձև և սեպաձև տարրեր նշաններով։ Օրիգիննեսի այս գործը շարունակեց նրա աշակերտ Պամփիլոս վկան, որը սըրբագրելով Ս. Գրքի ընդորինակության մեջ շարությամբ և տգիտությամբ մուծված վրիպակները, օրինակել տվեց Յոթանասնից թարգմանության մի հարազատ և ճշգրիտ օրինակ, համեմատելով այն օրիգիննեսյան օրինակների հետ, պահելով աստղաձև և սեպաձև նշանները, և այն հանձնեց իր բարեկամ և եկեղեցական մեծ գործի Եվոպիոս Կեսարացուն, պահելով այն խնամքով Պաղեստինյան Կեսարիայի գրադարանում։

Որոշ ժամանակ անց, Կոստանդիանոս կայսրը բերել տվեց Պամփիլան այս օրինակը և հարցուրավոր օրինակներով բաղմացնելուց հետո, պահ դրեց Կոստանդնուպոլիսի կայսերական գրատան մեջ։ Ս. Սահակը և Ս. Մեսրոպը, իմանալով այս մասին, շատ ցանկացան մի օրինակ ևս ունենալ Հայաստանում, որը անտարակույս ավելի մեծ հարգ և վավերականություն պետք է տար Աստվածաշնչի Հայերեն թարգմանության աշխատանքներին։ Եփեսուի ժողովից հետո, 432 թվականի առաջին ամիսներին, Կոստանդնուպոլիսում գտնվող թարգմանիչ վարդապետները, Եփեսուի ժողովում որոշումների և կանոնների հետ, Հայաստան բերեցին նաև Աստվածաշնչի այս թանկագիր օրինակը։ Եղ վերջնի բնագրի վրա, Ս. Սահակը ձեռնարկեց Աստվածաշնչի առաջին Հայերեն թարգմանության վերաբարերագրության, Կորլունի խոսքերով՝ «Հաստատել ճշմարիտ օրինակօք բերելով», այն է՝ ուղղել լրացնել առաջին թարգմանությունը։ Խորենացին այս երկրորդ թարգմանության մասին գրում է. «զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ, զարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ» (Պ գիրք, Վլ. կա, Էջ 354)։

Կորյունը և Խորենացին ակնարկում են, որ Աստվածաշնչի Հայերեն թարգմանության մեջ նախապատվություն էր տրվում Հունարեն Յոթանասնից բնագրին՝ որպես ճշգրիտ և վավերական բնագրի։

Կորյունը, որ միակ ժամանակակից պատմին է և Աստվածաշնչի Հայերեն թարգմանության մեջ ունեցել է գործուն մասնակ-

ցություն, բնագրի լեզվի մասին հստակ ուշինչ չի ասում, որովհետեւ հասկանալի է. որ դա հումարենն էր Մի այլ տեղ Կորյունը վկայում է, որ Ս. Սահակը, քըստ յառաջազոյն սովորութեան», գրաղվում էր «եկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ ի յունական բարբառոյն ի Հայերէն դարձուցեալ» (Էջ 33—34)։ Կորյունի այս վկայությունը արդյոք պետք է ընդունել որպես փաստ այն մասին, որ Աստվածաշնչի առաջին թարգմանության հիմք է ծառայել Հունարեն բնագրը, որը հետո սրբագրվել և «հաստատվել» է նոր թարգմանությամբ։

Դազար Փարպեցին ևս, որը Կորյունից հետո ամենից ավելի ժամանակամերժ և իրազեկ պատմին է Աստվածաշնչի Հայերեն թարգմանության աշխատանքներին, և այնքան խանդապառությամբ է խոսում Սահակ Պարթևի «գիշերական տքնութեամբ» Հունարենից կատարած թարգմանական աշխատանքների մասին՝ «սուրբ կաթողիկոսն Սահակ, արկանէր զանձն յաշխատութիւն հոգեոր և թարգմանէր զԱստուածաշնչի Կտակարանս ի յոյն լեզոյ ի Հայ բարբառ» (Էջ 33), երբեք լի խոսում ասորերեն ընագրի օգտագործման մասին։ Ընդհակառակը, Փարպեցին նշում է, որ ասորերենը «մուրացածոյ բարբառառան բեկորականի համար, «անլուր», այսինքն անիմանալի մի լեզու, որին տիրապետում էին «բազումք թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմածամանակեալ ղեգերմամբ»։

Նշել պետք է նաև այն, որ Եղարում ընդհանուր նկեղեցում և Հատկապես Ալեքսանդրիայում, Անտիոքում, Կոստանդնուպոլսում գործածվում էր Յոթանասնից կամ Ալեքսանդրյան թարգմանությունը՝ որպես Հին Կտակարանի կլասիկ, անսխալական թարգմանություն, մինչ Փեշիտոն լուներ Յոթանասնից բնագրի Հարգը՝ որպես վերջին թարգմանություն։ Որով մեր թարգմանիշները շէին կարող հրաժարվել Յոթանասնից թարգմանությունից, երբ իրենց առաջ Հարուին դրել ստեղծել նաև առաջին Հայ թարգմանական կոթողական գործը, որ Աստվածաշնչի թարգմանությունն էր։

Օտար քննադատներ, որոնք զբաղվել են Աստվածաշնչի թարգմանությանց բաղդատությամբ և համեմատությամբ, ինչպիսիք են Կառլեն, Բերտհոլդը, Շտուերնագելը, Լակրոզը, Կոնիբերը, Ռոբինզոնը, Պիտերմանը, Ն. Մատը և ուրիշներ, վկայում են, որ Աստվածաշնչի Հայ թարգմանությունը շատ մոտ է Յոթանասնից օրինակին և Վեցիշյանին։

Խորենացին ևս երբեք չեւ զբաղվում Աստվածաշնչի բնագրի հաջողվ, որովհետև նրա համար ևս պարզ է, որ դա հունարենն էր: Բայց Խորենացին է, որ առաջին անգամ առաջ է քաշում ասորերեն բնագրից ինչ որ թարգմանությունների հարցը:

Խորենացին վկայում է, որ Մեսրոպ Մաշտոցը, գրերի գյուտից անմիջապես հետո,

թարգմանության ժամանակ Աստվածաշնչի բնագրը նույնպես եղել է հունարեն: Ճիշտ է, նա չի նշում Հին Կտակարանի 22 հայտնի գրերի բնագրի լեզուն. դա, նույնպես համարակալի է, որ Խորենացու համար հունարենն էր: Սակայն Խորենացին մի այլ տեղ խոսում է ասորական բնագրից կատարված թարգմանությունների մասին (Գ գիրք, Գլ. ծդ,



ՄԱՆՈՅ ԳՐՁԻ ԱՌԱՋԻՆ ԷջԸ ՀԱՅԵՐԵՆ ՀԱԱԳՈՒՅՆ ՋԵՌԱԳԻՑ
(Հայկական ՍՍԴ Պետական մատենադարան, ձեռ. № 345)

«Քսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց, զբովանդակ քսան և երկու յայտնիսս և զնոր Կտակս յեղող ի հայ բան» (Էջ 336): Խորենացու այս հաղորդումը ցուց է տալիս, որ

Էջ 337): Այստեղ Խորենացին պատմում է, որ Մեսրոպ Մաշտոցը Հայաստան վերադառնալուց հետո Սամոսատից, ձեռնարկում է մանկավարժական գործոններության, դըպ-րոցներ է բաց անում, ժողովրդի մեջ տա-

րածում պրաճանաշություն, ապա մշակութային գործունեության և առաքելության համար անցնում է Վարց և Աղվանից երկըրները, նրանց համար նույնպես նշանագրիր է ստեղծում, և երբ վերադառնում է Հայաստան, «գտանձ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորույն՝ ոչ լինելոյ յունին: Քանզի նախ ի Մեհրուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց, շտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել զպրութիւն ումեք իրեանց մասին, այլ միայն ասորի»:

Բայց այսուղե ակնարկությունը՝ վերաբերում է ոչ թե Աստվածաշնչի թարգմանության ասորական բնագրից, այլ ընդհանրապես եկեղեցական գրքերի թարգմանության, որոնց կարիքը զգացվում էր նույն ժամանակամիջոցում: Կորյունը վկայում է շատ պարզ կերպով, որ Ս. Սահակը դրադվում էր թարգմանությամբ եկեղեցական գրքերի՝ «զգումարութիւն եկեղեցական գրոց», ինչպես նաև «բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ իմաստութիւնն թարգմանելով հայերէն», որով պետք է հասկանալ եկեղեցական պաշտամունքի ժամանակ կարգացված Ս. Գրոց հատվածների, կցորդ աղոթքների թարգմանությունները, այլ խորքով՝ ժամագրքի, Պատարագամատուց խորհրդատետրի և սուրբ հարց այլ գրվածքների թարգմանությունները:

Բայց սրանով չեն սպառվում Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակ օգտագործված ընագրի ընտրության հետ կապված դժվարությունները: Ստուգէ է, որ Աստվածաշնչի հին թարգմանության մեջ կան ոչ միայն ասորերեն թարգմանության հետքերը, այլ նաև մեզ են հասել տարրեր թարգմանությամբ Հին Կտակարանի մի շարք գրքերի թարգմանությունները, որոնք նույնիսկ ավելի հին են ժամանակի տեսակետից քան Յոթանասնից թարգմանությունը:

Ի՞նչպես լուծել այս հարցը: Արդյո՞ք առաջին թարգմանությունը եղել է ասորերեն ընագրի վրա: Կորյունը վկայում է, Աստվածաշնչի առաջին հայերեն թարգմանությունից հետո ձեռք բերված, մեր թարգմանիչների նաև ասորագիտության մասին: Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը նշանակում են թարգմանիչներից «զոմանս յասորի դպրութիւն և զոմանս յունական դպրութիւն» (էջ 14):

Նախապես Հովսեփ Պաղնացին և Եղնիկ Կողբացին 425—426 թվականներին ուղարկում են «ի կողմանս Ասորոց, ի քաղաքն Եփեսացւոց..., զի յասորական բարբառոյն՝

գոյցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուացեն» (Կորյուն, էջ 30): Կորյունի այս վկայությունը ոմանք մեկնել են այն իմաստով, որ Աստվածաշնչի առաջին թարգմանությունը եղել է ասորերեն ընագրից: Բայց խոսքը Կորյունի մոտ վերաբերում է ոչ թե Աստվածաշնչի թարգմանության, այլ Սահակ Պարթևի հանձնարարությամբ, եղեսիայում ասորական թարգմանություններ կատարելուց հետո, «անցեալ գնացին ի կողմանս յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելենական լեզուին» (էջ 31):

Որոշ ժամանակ անց, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Կոստանդնուպոլիս են ուղարկում Ղեռնդին և Կորյունին, որոնք միանալով Հովսեփին և Եղնիկին, մնում են այնտեղ «միաբանութեամբ» հոգևոր պիտոյիցն՝ զինդիրն վճարէին, որով յետ այնորիկ հաստատում օրինակօք աստուածատուր գրոցն և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբ և Նիկիական և Եփեսոսական կանոնօք գային երեւելով աշխարհին Հայոց և առաջի զնէին հարցն զբերեալ Կտակարանսն Եկեղեցու Սրբոյ» (էջ 31):

Վարդապետների վերադարձից հետո Ս. Սահակը հատկապես Եղնիկի օժանդակությամբ սկսում է Աստվածաշնչի առաջազգոյն, յանկարծակի, փութանզի թարգմանության վերասրբագրության, վերաթարգմանության: «Պարձեալ յետ այնորիկ առեալ [Սահակայ] հանդերձ Եղնկաւ զյառաջազգոյն զյանկարծագիւտ զփութանակի թարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք» (էջ 31):

Խորենացին ևս (Գ գիրք, գլ. կա, էջ 353) վկայում է, որ Յուղանդիայից վերադարձող վարդապետները Սահակին և Մեսրոպին են հանձնում «յԱշտիշատ Տարօնոյ... զփուղթսն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ գլխոց և զսոոյդ օրինակի գրոց: Զոր առեալ Սահակայ և Մեսրոպայ, պարձեալ թարգմանեցին»:

Կորյունի և Խորենացու վկայություններն ապացուցում են, որ Կոստանդնուպոլիսից ուղարկված Աստվածաշնչի սատոյգ և հաստատում օրինակը ծառայում է որպես հիմք ստուգելու, ճշգրտելու և ամբողջացնելու առաջին թարգմանությունը:

Առաջին թարգմանության մեջ պակասում էին Հին Կտակարանի երկրորդականոն քրոքերը: Յոթանասնից թարգմանության մեջ հետո մուծված մի շարք երրայական սրբա-

ղան գրքեր՝ գոված երրայերեն և մասամբ արամերեն, որոնք երրայական կանոնի մեջ չկային, կոշկում են երկրորդականոնները, այսպես օրինակ՝ Մակարայեցվոց առաջին գիրքը, Սիրաբը, Տովքիթը, Հուդիթը, Բարուքը: Իսկ Յոթանասնից թարգմանության մեջ մտել են հմաստություն Սոլոմոնի, Եզրաս, թ Մակարայեցվոց, Թուղթ Երեմիայի, Դանիել մարդարեսության մեջ Օրինություն երից մանկանցն և այլ մասեր, որոնց բնագիրը հոմարեն է և չի մտել երրայական կանոնի մեջ:

Արդ, եթե Աստվածաշնչի թե՛ նախնական և թե՛ սրբագրված թարգմանությունները եղել են հունական սկզբնադրյուրների կամ բնագրերի վրայից, ինչպես բացատրել ասորերենի հետքերը կամ Յոթանասնից թարգմանության հետ անհամաձայնությունները, որոնք կան Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, ինչպես նաև երրայերենի հետքերը:

Թանասերներից ոմանք, և ի մասնավորի Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միարանը), ընդունում են Աստվածաշնչի հայերեն մի երրորդ թարգմանություն (տե՛ս «Արարատ», 1908 թ., էջ 564, «Տիմոթեոս Կուլի Հականառության հայ թարգմանության ժամանակը և Ս. Գրքի երրորդ կամ Ծնորաբեր» հայ թարգմանությունը), կատարված ե դարի երկրորդ կեսին, հունարան դպրոցին պատկանող հեղինակների ձեռքով:

Մայր Աթոռի վաստակավոր գիտնական Միարանը, Հենվելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Գ գրքի կա գլուխ վրա (էջ 354), «ի բազում մասանց թերացեալ գործն» համարում է երկրորդ թարգմանությունը, Պրոֆ. Հ. Աճառյանը «Ծողակաթություն» (Մ. էջմիածնի հայագիտական ժողովածու, Ա գիրք, Վաղարշապատ, 1913 թ., էջ 1) նշելով մեկտեղ, որ «բանասեր Գալուստ Տ. Մկրտչյան երեան կհանե բոլորովին նոր ինսդիր մը՝ որ հայ մատենագրության պատմության համար ահագին նշանակություն ոմի քանի մը տեսակետով», միաժամանակ շեշտում է, որ «մեր հին մատենագրությունը կճանշնա Ս. Գրքի երկու թարգմանություն... և բանասերները նորենացին այդ սեղեկության վրա միշտ կասկածով նայած են. արդեն Խորենացին ինքն ալ չի պատմեր, թե այս երրորդ թարգմանությունը կատարվեցա՞վ թի ոչ»:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության տեքստի հարցով զրադիկել են նաև Հ. Հովհաննես վարդապետ Զոհրապյանը 1805 թվականի Աստվածաշնչի հայերեն Դ տպագրության առաջարանում, նրա հետևու-

թյամբ՝ Հ. Գարեգին վարդապետ Զարբչանելյանը իր «Հայկական թարգմանությունը» գործում, Գ. Խալաթյանցը՝ «Գիրք Մացորդաց ըստ Հնագոյն հայ թարգմանութեանց» (Մովսես, 1899 թ.), «Ցաղազար թարգմանութեանց» աստուածաշոնչ տաղից ի հայոց լեզու («Թաղմավեպ», 1850 թ.), Մեսրոպ արքեպիսկոպոս Մովսեսիանը՝ Մայր Աթոռի միարան, իր գոկտորական գիտերտացիայի մեջ՝ «Ա. Գրքի հայերեն թարգմանության պատմությունը» (ոռուսերեն), ապա Մատաթիա Գարագաշյանը, Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, Հ. Ներսես Ակինյանը, Հ. Թորոսյանը, Հ. Սահակ Կոգյանը, Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, Հ. Արսեն Հացունին, Բարգեն Կաթողիկոս Կյուկսերյանը, Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը, պրոֆ. Ն. Արոնցը, պրոֆ. Լեռն, պրոֆ. Մատաթիայանը, պրոֆ. Արելյանը, պրոֆ. Աճառյանը և ուրիշներ:

Մտույգ է, որ ունենք Հին Կտակարանի մի շարք գրքերի ավելի հին թարգմանություններ, որոնք կատարվել են ասորերեն բնագրի վրայով: Օրինակ՝ մեկ է հասել Ա Մնացորդաց գրքի ասորերենից կատարված թարգմանությունը, Հրատարակված Գրիգոր Խալաթյանցի կողմից: Կրկին թարգմանությամբ մեկ հասել են Առակաց գրքի, Ժողովողի և երգ երգոցի թարգմանությունները (տե՛ս Նորայր Բյուզանդացից, «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփիս, 1900 թ.): Հ. Սահակ Կոգյանը Հրատարակել է մի այլ հին թարգմանություն՝ Մակարայեցվոց Բ գրքի հայերեն թարգմանությունը (Վիեննա, 1923 թ.): «Սիոն» ամսագրի 1936 թվականի մայիսի և 1937 թվականի ապրիլի համարների մեջ նորայր եպիսկոպոս Պողարյանը Հրատարակել է Սիրաքի, Ա և Բ Մնացորդաց և Ժողովողի հին հայ թարգմանությունների տարրերակներ՝ բաղդատություններով և ծանոթագրություններով:

Փարացեցին հիշում է Սաղմոսների երկու թարգմանությունների մեկ տարրերությունը Ժ Սաղմոսում, Թոմաս Արծրունին վկայում է, որ սասնեցիք «գիտեն զՍաղմոսսն գին թարգմանեալն վարդապետաց հայոց»: Օձնեցին, Ղետոն պատմիլը. և նարեկացին գործածում են Սաղմոսների ավելի հին թարգմանությունը: Մատաթիա Գարագաշը իր «Աստուածաշոնչ մատեան Հին և նոր Կտակարանաց» աշխատության առաջարանում (Կոստանդնուպոլիս, 1895 թ.), հասուատում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը երրայական բնագրի հետ բաղդատելիս «թէպէտու թարգմանութիւն մեր գհետ երթայ բազում հաւաստեալ և ճշտի զթարգմանութեանն Յոթանասնից, ուրեք ուրեք

խոպրեալ ի նմանէ, մերձենայ երբայական ընագրինս:

Մատենագրական այս շատ հետաքրքիր և կարևոր հարցը բանասերները բացատրել են տարբեր տեսանկյուններից: Ոմանք ընդունել են, որ Աստվածաշնչի պաշտոնական և սրբագրված ու հաստատված թարգմանությունից առաջ եղել են նախապես ասորերենից ևս կատարված բանավոր թարգմանություններ Հին Կոտակարանի մի քանի գրքերի, որոնք վերջին թարգմանության և սրբագրության ժամանակ թարգմանիչների աշքի առաջ են եղել և նրանցից ոմանք նախաժեժար են համարել ասորական կամ երրայական ընթերցումը որոշ հատվածների մեջ:

Այլ քննադատներ առաջ են քաշել այն կարծիքը, որ թարգմանիչների առաջին եռանգը թելադրել էր նրանց «անհապաղ հայցնել Աստվածաշունչը իր մասերուն մեջ, առանց խտրություն զնելու բնագրի և բնագրի միջև: Բայց հետո, երբ առաջին ոգևորությունը տեղի տվավ խոհականության, ուշադրություն դարձվեցավ բնագրի միասնականության և նախապատվություն շնորհվեցավ հունարենի, որմեն նաև ասորականը կրխեր» («Հանդես ամսօրյա», 1930, էջ 550):

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը կատարվել է Հունարեն Յոթանասնից

բնագրի հարազատությամբ, բարեխղճությամբ, հոգով և հավատով, որպես առաջին հայ գրական մատենագրական երկը մեր դպրության, ոմիացած լեզվի և ոճի այնպիսի գեղեցկության և ընականության, որ կարծես սրբազն հեղինակները հայու պես գործեր են» («Թագմավեպ», 1935, էջ 293):

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը հավերժական փառքն է Ս. Սահակի և Ս. Մեսրոպի և մեր թարգմանիչների, միաժամանակ անկողղութելի հպարտությունը և պատիվը մեր ժողովրդի:

Մեզ հասած հայերեն Աստվածաշնչի ամենահին ձեռագիրը կրում է 1270 թվականը, ըստ Երևանի Ձեռագրատան № 345 ձեռագրի: Դա լիակատար մի Աստվածաշունչ է, գրված Սսում: Խոկ ամենահին ձեռագիր Ավետարանը, որը կրում է 887 թվականը, կոչվում է Լազարյան Ավետարան:

Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրությունը եղել է 1666 թվականին Ամստերդամում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հաշվին, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հրամանով, երևանց Ռուկան վարդապետի նախաձեռնությամբ:

Աստվածաշնչի տպագրության պատմության մասին հաջորդիվ, առանձին այլ հոդվածում:

Ա. Հ.

